



Հ Ե Կ Ո Ւ Յ Ց

// Երևան, 2019թ. ապրիլի 16

Հանրապետության Նախագահի կողմից
Սահմանադրական դատարանի դատավորի
առաջադրման ընթացակարգի վերաբերյալ

Ներածություն	2
1. Գործընթացի նախապատմությունը և վերաբերելի փաստերը	3
(ա) Գործընթացի նախապատմությունը	3
(բ) Վերաբերելի փաստերը	7
2. Վերաբերելի իրավական կարգավորումները	10
3. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման ընթացակարգի իրավաչափությունը	13
4. Ընթացակարգի համապատասխանությունը իրավունքի սկզբունքներին	17
(ա) Արդարություն	17
(բ) Թափանցիկություն	18
5. Աշխատանքային խմբի կազմավորումը և դրա արդյունավետությունը	21
6. Աշխատանքային խմբի գործիքակազմը և դրա արդյունավետությունը	25
(ա) Դիմումների ներկայացման փուլ	25
(բ) Անհատական զրույցի փուլ	26
(գ) Խորհրդատվական կարծիքների ներկայացման և ամփոփման փուլ	27
7. Քաղաքական ազդեցությունները Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու գործընթացում	29
8. Ամփոփիչ եզրակացություններ	34

Ներածություն

«Իրավական ուղի» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, կարևորելով ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի՝ ՀՀ նախագահի կողմից ընտրության և ՀՀ ազգային ժողով առաջադրման գործընթացի իրավաչափությունը և դրա նկատմամբ հանրային վստահությունը, կատարել է Հանրապետության նախագահի 2019թ. հունվարի 31-ի ՆԿ-5-Ա կարգադրության (այսուհետ՝ նաև Կարգադրություն) հիման վրա իրականացված համապատասխան գործընթացի մշտադիտարկում: Մշտադիտարկումն իրականացվել է ՀՀ նախագահի կարգադրությամբ ձևավորված խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի (այսուհետ՝ նաև Աշխատանքային խումբ) կողմից հավակնորդների հետ անհատական զրույցների դիտարկման, հարցումների միջոցով անհրաժեշտ տվյալների ստացման, հրապարակային վերաբերելի տեղեկատվության ուսումնասիրության, սահմանադրական և միջազգային իրավունքում առկա չափորոշիչների վերհանման և վերլուծության եղանակներով: Մշտադիտարկման արդյունքները ներկայացված են սույն զեկույցում:

Սույն զեկույցով անդրադարձ է կատարվում ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման ընթացակարգի իրավաչափությանը, արդարության և թափանցիկության սկզբունքներին համապատասխանությանը, Աշխատանքային խմբի կազմավորման և գործունեության արդյունավետությանը, ինչպես նաև թեկնածուի առաջադրման գործընթացի նկատմամբ քաղաքական ազդեցություններին վերաբերող հարցերին: Զեկույցում նաև կատարվում են նշված գործընթացի կատարելագործմանը, այդ թվում՝ իրավաչափության ապահովմանն ուղղված առաջարկներ:

1. Գործընթացի նախապատմությունը և վերաբերելի փաստերը

(ա) Գործընթացի նախապատմությունը

1.1 2018թ. ապրիլի 9-ին՝ ՀՀ չորրորդ նախագահ Արմեն Սարգսյանի պաշտոնամուտի օրը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության դրույթներն ամբողջ ծավալով մտել են ուժի մեջ: Այդ օրվա դրությամբ առկա է եղել Սահմանադրական դատարանի դատավորի թափուր պաշտոն, որը ենթակա էր համալրման ՀՀ նախագահի առաջարկությամբ:

1.2 2018թ. ապրիլի 26-ին ՀՀ նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջադրել է Էմիլ Բաբայանի թեկնածությունը¹:

1.3 2018թ. ապրիլի 30-ին ՀՀ նախագահին և ՀՀ ազգային ժողովին դիմել է «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը՝ կոչ անելով հետ կանչել Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում նախագահի կողմից Էմիլ Բաբայանի թեկնածության առաջադրումը, չքվեարկել նրա օգտին և ձեռնամուխ լինել այնպիսի ընթացակարգերի ձևավորմանը, որոնք կապահովեն Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում առաջադրման նպատակով թեկնածուների ընտրության ընդհանուր և հավասար հիմունքներով թափանցիկ, հրապարակային և արդար ընթացակարգերով մրցույթի անցկացում²: Ազգային ժողովում պատգամավոր Արտակ Զեյնալյանի հայտարարության համաձայն՝ նշված կոչին միացել են այլ հասարակական կազմակերպություններ ևս³ (դրանց ցանկը հրապարակային աղբյուրներում չի հաջողվել պարզել):

¹ Parliament.am, ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայք, «Արա Բաբայանի հայտարարությունը Սահմանադրական դատարանի դատավորի առաջադրման և ընտրության անցկացման մասին», 26 ապրիլի, 2018թ., հղում՝ http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10244&year=2018&month=04&day=26 (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

² 168.am լրատվական կայք, «Հետ կանչել ՍԴ դատավորի պաշտոնում Էմիլ Բաբայանի թեկնածության առաջադրումը. հայտարարություն», 30 ապրիլի 2018թ, հղում՝ <https://168.am/2018/04/30/944185.html> (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

³ 1in.am լրատվական կայք, «32 ՀԿ-ներ դիմել են նախագահին՝ ետ կանչելու Էմիլ Բաբայանի թեկնածությունը. Արտակ Զեյնալյանը՝ Գևորգ Կոստանյանին», 03 մայիսի 2018թ., հղում՝ <https://www.1in.am/2345702.html> (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

1.4 2018թ. մայիսի 4-ին Ազգային ժողովում տեղի ունեցած քվեարկությամբ էմիլ Բաբայանն անհրաժեշտ 63-ի փոխարեն ստացել է 51 քվե և չի ընտրվել որպես Սահմանադրական դատարանի դատավոր⁴:

1.5 2018թ. մայիսի 13-ին 73 փաստաբան և 10 հասարակական կազմակերպություն ՀՀ նախագահին դիմել են կոչով, որպեսզի վերջինս ձեռնամուխ լինի հավասարության և արդարության սկզբունքներին համապատասխանող թափանցիկ և հրապարակային ընթացակարգով Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության և առաջադրման գործընթացին՝ հիմնված բարձր հեղինակություն վայելող հանձնաժողովի խորհրդատվության վրա⁵:

1.6 2018թ. մայիսի 17-ին ՀՀ նախագահը նամակով դիմել է ՀՀ ազգային ժողովի նախագահին Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջադրման հարցով: Նամակում մասնավորապես նշված է. «Ելնելով Ազգային ժողովում նախորդ թեկնածուի ներկայացման ժամանակ հնչած առաջարկներից և քննադատությունից, ինչպես նաև այդ հարցով իմ ունեցած բազմաթիվ հանդիպումներից՝ եկել եմ այն եզրահանգման, որ թեկնածություն ներկայացնելիս անհրաժեշտ են հստակ խորհրդակցական մեխանիզմներ և ընթացակարգեր: Կարևորում եմ նաև հավուր պատշաճի քննարկումները իրավաբանական հանրության ներկայացուցիչների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ: Տեղեկացված եմ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության ընթացակարգերի վերաբերյալ հասարակական կազմակերպությունների մտահոգություններին և առաջարկներին: Կարևորելով վերոշարադրյալը, ես պատրաստ եմ լսելու իրավաբանական հանրության ներկայացուցիչների կարծիքները՝ Սահմանադրական դատարանի բարձր դերին համապատասխանող դատավորի թեկնածությունների վերաբերյալ և Ազգային ժողովին առաջադրել Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու: Որպես Հանրապետության նախագահ, որի հիմնական առաքելությունը

⁴ Parliament.am, ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայք, «Խորհրդարանն ավարտել է հերթական նիստերի աշխատանքը», 04 մայիսի 2018թ., հղում՝ http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10265&year=2018&month=05&day=04 (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

⁵ A1plus.am, լրատվական կայք, «Մտահոգ են ՀՀ նախագահի՝ ՍԴ դատավորի թեկնածուի առաջադրման կապակցությամբ. հայտարարություն», 13 մայիսի 2018թ., հղում՝ <https://www.a1plus.am/1617494.html> (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

Սահմանադրության պահպանմանը հետևելն է, վստահեցնում եմ, որ կձեռնարկեմ անհրաժեշտ բոլոր քայլերը ողջամիտ ժամկետներում այդ առաջադրումը կատարելու համար»⁶:

1.7 2018թ. մայիսի 21-ին 200-ից ավելի փաստաբաններ, հիմք ընդունելով ՀՀ նախագահի հայտարարությունը (տե՛ս սույն զեկույցի 1.6 կետը) Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման վերաբերյալ իրավաբանական հանրության ներկայացուցիչների կարծիքը լսելու և թեկնածուի առաջադրումը հստակ խորհրդակցական մեխանիզմներով և ընթացակարգերով իրականացնելու պատրաստակամության վերաբերյալ, առաջարկել են քննարկել փաստաբան Վահե Գրիգորյանի թեկնածությունը⁷:

1.8 2018թ. հունիսի 11-ին ՀՀ նախագահը, հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասը և նպատակ ունենալով ապահովել Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորության իրականացումը, ընդունել է ՆԿ-84-Ա կարգադրությունը «խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խումբ ստեղծելու և Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրությունը կանոնակարգելու վերաբերյալ»⁸:

1.9 Համաձայն ՀՀ նախագահի 2018թ. հունիսի 11-ի կարգադրության հավելվածի՝ խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի կազմում ներգրավվել են՝ (1) Նախագահի երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը՝ աշխատանքային խմբի ղեկավար, ինչպես նաև, համաձայնությամբ, հետևյալ մարմինների ներկայացուցիչները՝ (2) պետական մարմիններ. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատություն, Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողով, Բարձրագույն դատական խորհուրդ, Արդարադատության նախարարություն,

⁶ Haynews.am լրատվական կայք, «Արմեն Սարգսյանը նամակով դիմել է Արա Բաբոյանին», 17 մայիսի 2018թ., հղում՝ <http://haynews.am/hy152379680/1526544854> (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

⁷ Newspress.am լրատվական կայք, «200-ից ավելի փաստաբաններ Վահե Գրիգորյանին երաշխավորում են ՍԴ դատավորի պաշտոնում», 21 մայիսի 2018թ., հղում՝ <http://newspress.am/?p=83426&l=am/200ic+aveli+pastabaner+vahe+grigoryanin+erashxavorum+en+sd+datavori+pashtonum>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

⁸ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, ՆԿ-84-Ա կարգադրության հավելված, 11 հունիսի 2018թ., հղում՝ <https://www.president.am/hy/Directives/item/4594/>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

(3) գիտակրթական հաստատություններ. Երևանի պետական համալսարան, Արդարադատության ակադեմիա, Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆրանսիական համալսարան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, (4) հասարակական միավորումներ. Փաստաբանների պալատ, «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» ՀԿ⁹:

1.10 2018թ. հունիսի 18-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Հանրապետության նախագահի 2018 թվականի հունիսի 11-ի ՆԿ-84-Ա կարգադրության 2-րդ կետի 2-րդ ենթակետը, հաստատել է խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի անհատական կազմը¹⁰:

1.11 Խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբին դիմել է հինգ հավակնորդ¹¹: 2018թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջադրել է Վահե Գրիգորյանի թեկնածությունը¹²: 2018թ. հոկտեմբերի 23-ին Ազգային ժողովում տեղի ունեցած քվեարկությամբ Վահե Գրիգորյանն անհրաժեշտ 63-ի փոխարեն ստացել է 30 քվե և չի ընտրվել որպես Սահմանադրական դատարանի դատավոր¹³:

⁹ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, ՆԿ-84-Ա կարգադրության հավելված, 11 հունիսի 2018թ., հղում՝ <https://www.president.am/files/legislation/4579.pdf>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹⁰ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, ՆԿ-84-Ա կարգադրություն, 18 հունիսի 2018թ., հղում՝ <https://www.president.am/files/legislation/4594.pdf>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹¹ A1plus.am, լրատվական կայք, «ՍԴ դատավորի թեկնածու առաջադրվելու համար ստացվել է հինգ դիմում», 13 հուլիս 2018թ., հղում՝ <https://a1plus.am/hy/article/189489?fbclid=IwAR1CvEePcGDpuTA3BcyT5Ngs6qBxwQd2YWjuKzYLP-NawL9ehU1K6HelBWk> (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹² Parliament.am, ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայք, «ՀՀ ԱԺ նախագահի հայտարարությունը Սահմանադրական դատարանի դատավորի առաջադրման և ընտրության անցկացման մասին», 19 հոկտեմբերի 2018թ., հղում՝ http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10849&year=2018&month=10&day=19 (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹³ Parliament.am, ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայք «Խորհրդարանն սկսել է հերթական նիստերի աշխատանքը», 23 հոկտեմբերի 2018թ., հղում՝ http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10863&year=2018&month=10&day=23 (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

(բ) Վերաբերելի փաստերը

1.12 2019թ. հունվարի 31-ին ՀՀ նախագահը, հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասը և նպատակ ունենալով ապահովել Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորության իրականացումը, ընդունել է ՆԿ-5-Ա կարգադրությունը «Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրությունը կանոնակարգելու վերաբերյալ»¹⁴:

1.13 2019թ. փետրվարի 6-ին ՀՀ նախագահի պաշտոնական կայքում տեղադրվել է հայտարարություն, համաձայն որի՝ ՆԿ-5-Ա կարգադրության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրմանը մասնակցելու նպատակով հավակնորդները մինչև փետրվարի 28-ը ՀՀ նախագահի աշխատակազմ պետք է ներկայացնեն Սահմանադրության 165-րդ հոդվածի 1-ին մասով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջները հավաստող փաստաթղթերը՝ (1) դիմումը, (2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը, (3) միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ, (4) հայերենին տիրապետելու վերաբերյալ պահանջի բավարարումը հավաստող փաստաթուղթ, (5) իրավաբանի բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը, (6) իր կենսագրական տվյալները պարունակող թերթիկ, (7) մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությունը հավաստող փաստաթուղթ, (8) բարձր մասնագիտական որակները հավաստող այլ փաստաթղթեր¹⁵:

1.14 Սույն Ձեկույցի 1.13-րդ կետում նշված հայտարարությանը նաև կցվել են դիմումի և կենսագրական տվյալները պարունակող թերթիկի ձևերը: Ընդ որում, դիմումի

¹⁴ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, «Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրությունը կանոնակարգելու վերաբերյալ» կարգադրություն, 31 հունվարի 2019թ., հղում՝ <https://www.president.am/hy/Directives/item/4768/>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹⁵ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, «Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման վերաբերյալ» մամուլի հաղորդագրություն, 06 փետրվարի 2019թ., հղում՝ <https://www.president.am/hy/press-release/item/2019/02/06/announcement/>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

սահմանված ձևին համապատասխան՝ գործընթացին դիմելու փաստը հրապարակային դարձնելու հարցը թողնվել է հավակնորդի հայեցողությանը:

1.15 Համաձայն Կարգադրության հավելվածի՝ Աշխատանքային խմբի կազմում ներգրավվել են՝ Նախագահի երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը՝ աշխատանքային խմբի ղեկավար, ինչպես նաև, համաձայնությամբ, հետևյալ մարմինների ներկայացուցիչները՝ Մարդու իրավունքների պաշտպան, Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողով, Բարձրագույն դատական խորհուրդ, Արդարադատության նախարարություն, Երևանի պետական համալսարան, Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆրանսիական համալսարան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Փաստաբանների պալատ¹⁶:

1.16 Սահմանված վերջնաժամկետից՝ փետրվարի 28-ից հետո Աշխատանքային խմբի կամ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից չի կատարվել հավակնորդների, ներառյալ՝ նրանց թվի վերաբերյալ հրապարակում: Այդ փաստը հրապարակային է դարձվել միայն մարտի 11-ին՝ ԶԼՄ-ների կողմից¹⁷:

1.17 Աշխատանքային խմբի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի համար ներկայացված երեք հավակնորդներից մեկի՝ Գոռ Հովհաննիսյանի հետ անհատական զրույցը տեղի է ունեցել 2019թ. մարտի 6-ին, իսկ մյուս երկու հավակնորդների՝ Վահե Գրիգորյանի և Մարտին Մանուկյանի հետ՝ մարտի 13-ին:

1.18 2019թ. մարտի 21-ին ՀՀ նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջադրել է Գոռ Հովհաննիսյանի թեկնածությունը¹⁸:

1.19 2019թ. մարտի 22-ին ԱԺ նախագահը հայտարարություն է տարածել, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության հարցը

¹⁶ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, «խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խումբ ստեղծելու մասին կարգադրություն», 31 հունվարի 2019թ., հղում՝ <https://www.president.am/files/legislation/4768.pdf>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹⁷ Armdaily.am, լրատվական կայք, «Ովքե՞ր են դիմել ՍԴ դատավորի թափուր պաշտոնի համար. կհաջողի՞ նախագահը երրորդ փորձից», 11 մարտի 2019թ., հղում՝ <https://www.armdaily.am/news/17096.html?lang=hy>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

¹⁸ President.am, ՀՀ նախագահի պաշտոնական կայք, «Հանրապետության նախագահն առաջադրել է Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածու», մամուլի հաղորդագրություն, 21 մարտի 2019թ., հղում՝ <https://www.president.am/hy/press-release/item/2019/03/21/President-Armen-Sarkissian-nominates-Gor-Hovhannisyan-for-judge-at-the-Constitutional-Court/>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

կքննարկվի ապրիլի 16-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի առաջին նիստում:

2. Վերաբերելի իրավական կարգավորումները

2.1 ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝

«(...) 2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: (...)»

4. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով»:

2.2 ՀՀ Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ: (...)»

2.3 ՀՀ Սահմանադրության 165-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: (...)»

5. Դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ»:

2.4 ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: (...)»:

2.5 Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական և բարոյական որակներով և մասնագիտական

աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը»:

2.6 Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրությունը կատարվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով:»

2.7 Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի համաձայն (մինչև 2019 թվականի ապրիլի 2-ի խմբագրությամբ)՝

«1. Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունն անցկացվում է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալու դեպքում, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ավարտին կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում:

2. Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի ինը դատավորից երեքին ընտրում է Հանրապետության նախագահի, երեքին՝ Կառավարության, երեքին՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ:

3. Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար Հանրապետության նախագահը, դատավորների ընդհանուր ժողովը և Կառավարությունը՝ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում՝ Սահմանադրական դատարանի նախագահի կողմից համապատասխան տեղեկությունն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուն առաջադրվում է Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով, որտեղ նշվում են Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի և նրան ներկայացնելու իրավասություն ունեցող անձի անունները, ազգանունները: Դիմումին կցվում են Սահմանադրությամբ և օրենքով

սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Սահմանադրության կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է թեկնածուին առաջադրող մարմնին՝ նշելով պատճառների մասին, որն էլ պարտավոր է հնգօրյա ժամկետում առաջադրել նոր թեկնածու: (...)

7. Սահմանադրական դատարանի դատավորն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ավարտին կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում ընտրվելու դեպքում Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորն իր պաշտոնն ստանձնում է Սահմանադրական դատարանի համապատասխան դատավորի լիազորությունների ավարտման կամ պաշտոնավարման տարիքը լրանալու օրը:

8. Եթե Սահմանադրական դատարանի դատավորը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, իրավասու մարմինը առաջադրում է նոր թեկնածու»:

3. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման ընթացակարգի իրավաչափությունը

3.1 Սույն զեկույցի շրջանակում քննարկման ենթակա առաջին հարցը հետևյալն է. արդյոք ինքնին իրավաչափ է ՀՀ նախագահի կարգադրությամբ Աշխատանքային խմբի ձևավորումը՝ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրումն ապահովելու նպատակով:

3.2 Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրելու համար որոշակի ընթացակարգ սահմանելու, այդ թվում՝ խորհրդակցական բնույթի աշխատանքային խումբ ձևավորելու անհրաժեշտության հարցն օրակարգային դարձավ 2018թ. մայիսին՝ ՀՀ նախագահի կողմից ՍԴ դատավորի առաջին թեկնածուի ընտրության հարցը ԱԺ-ում քննարկելուն զուգահեռ (տե՛ս սույն զեկույցի 1.3 կետը): 2018թ. մայիսից ի վեր այդ ընթացակարգի իրավաչափության, անհրաժեշտության, թույլատրելիության, արդյունավետության վերաբերյալ հրապարակավ հնչել են բազմաթիվ մասնագիտական և քաղաքական կարծիքներ և գնահատականներ: Աշխատանքային խմբի ձևավորումն ինքնին ոչ իրավաչափ համարելու մոտեցման հիմնական փաստարկն այն է, որ ՀՀ նախագահը չունի խորհրդակցական մարմիններ (այդ թվում՝ աշխատանքային խումբ) կազմավորելու լիազորություն: Հակառակ մոտեցման հիմնական փաստարկն այն է, որ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրելու՝ ՀՀ նախագահի լիազորությունն ինքնին ենթադրում է, որ առաջադրման եղանակն ընտրելու լայն հայեցողություն՝ ներառյալ ընթացակարգ սահմանելու և դրա շրջանակներում աշխատանքային խումբ կազմավորելու լիազորությունը:

3.3 Համաձայն ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով (տե՛ս սույն զեկույցի 2.1 կետը), իսկ համաձայն 166-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը. երեքին՝ Նախագահի, երեքին՝ Կառավարության, և երեքին՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ (տե՛ս սույն զեկույցի 2.4 կետը): Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ նախագահն օժտված է Սահմանադրական դատարանի

դատավորի թեկնածու առաջադրելու լիազորությամբ, սակայն օժտված չէ այդ լիազորության կամ որևէ այլ գործառույթի կամ լիազորության իրականացման համար խորհրդակցական մարմին (այդ թվում՝ աշխատանքային խումբ) ձևավորելու լիազորությամբ:

3.4 Հետևաբար քննարկման առարկա հարցը հանգում է հետևյալին. արդյոք իրավաչափ է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման՝ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունն իրականացնել սահմանադրությամբ չնախատեսված եղանակով՝ ՀՀ նախագահի կարգադրությամբ հատուկ ընթացակարգ (այդ թվում՝ խորհրդակցական աշխատանքային խումբ) ձևավորելով:

3.5 Նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է ի հայտ բերել Սահմանադրի կամքը ՀՀ նախագահին խորհրդակցական մարմին (այդ թվում՝ խորհրդակցական աշխատանքային խումբ) ձևավորելու լիազորություն տրամադրելու հարցում: Կիրառելով օրենսդրության նախորդ տեքստի հետ նոր տեքստի համեմատության մեթոդը¹⁹՝ արձանագրում ենք, որ ՀՀ Սահմանադրության 2005թ. խմբագրությունում՝ 55-րդ հոդվածի 6-րդ կետում ՀՀ նախագահի համար հատուկ սահմանված է եղել խորհրդակցական մարմիններ ձևավորելու լիազորություն: Ուստի տրամաբանական է ենթադրել, որ խորհրդակցական մարմին (այդ թվում՝ աշխատանքային խումբ) ձևավորելու լիազորությամբ ՀՀ նախագահին օժտելու հարցում Սահմանադրի մոտեցումը փոխվել է. մինչև 2018թ. ապրիլի 9-ը դա համարվել է իրավաչափ, իսկ դրանից հետո՝ ոչ:

3.6 Այս մոտեցմանը կարելի էր հակափաստարկել՝ պնդելով, որ, հնարավոր է, Սահմանադրի և օրենսդրի մոտեցումը փոխվել է խորհրդակցական մարմին (այդ թվում՝ աշխատանքային խումբ) ձևավորելու համար հատուկ լիազորություն ամրագրելու անհրաժեշտության հարցում, և միգուցե ներկայումս նման լիազորության հատուկ ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուհանդերձ, այդ հնարավոր պնդումը չի հիմնավորվում համասեռ իրավակարգավորումների համեմատությամբ. ՀՀ գործող օրենսդրությամբ՝ խորհրդակցական մարմին (այդ թվում՝ աշխատանքային խումբ) ձևավորելու լիազորությունը հատուկ ամրագրում է ստանում: Մասնավորապես, ներկայում

¹⁹ Որպես այդ մեթոդի կիրառության օրինակ՝ տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի ՎԲ-125/07 որոշումը:

այն սահմանված է ՀՀ վարչապետի²⁰, ՀՀ ԱԺ նախագահի²¹, համայնքի ավագանու²², ՀՀ գլխավոր դատախազի²³, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի²⁴, հարկային մարմնի ղեկավարի²⁵ համար և այլն:

3.7 Հարկ է հատուկ ընդգծել, որ ինչպես մինչև 2018թ. ապրիլը, այնպես էլ դրանից հետո իրավասու պետական մարմինների կողմից ձևավորված խորհրդակցական մարմիններից շատերը կրել են «աշխատանքային խումբ» անվանումը²⁶: Ընդ որում, վերլուծելով ՀՀ նախագահի (մինչև 2018թ. ապրիլի 9-ը) և ՀՀ վարչապետի կողմից, ղեկավարվելով համապատասխանաբար ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 55-րդ հոդվածի 6-րդ կետով և Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով ձևավորված աշխատանքային խմբերի իրավական բնույթը՝ կարող ենք եզրակացնել, որ դրանցից շատերին չի վերապահվել չորոշակիացված շրջանակի անձանց վարքագծի նկատմամբ ներգործության իրավասություն: Մինչդեռ խնդրո առարկա Կարգադրությամբ ձևավորված Աշխատանքային խմբին այդպիսի իրավասություն վերապահվել է: Այդ իրավասությունը վերաբերել է բոլոր այն անձանց, որոնք հավակնել են ՀՀ նախագահի կողմից առաջադրվելու որպես ՀՀ ՍԴ դատավորի թեկնածու և ներառել է՝ (1) հավակնորդների առաջադրման գործընթացի կազմակերպումը (Կարգադրության 2-րդ կետի 1-ին ենթակետ), այսինքն՝ առնվազն ներկայացման ենթակա փաստաթղթերի շրջանակի որոշումը, առանձին փաստաթղթերի ձևանմուշների հաստատումը²⁷, և (2) յուրաքանչյուր հավակնորդի հետ անհատական զրույցի կազմակերպումն ու անցկացումը

²⁰ Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ 2018թ. օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մաս:

²¹ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետ:

²² Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետ:

²³ Դատախազության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ:

²⁴ Քննչական կոմիտեի մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ:

²⁵ Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի 16-րդ կետ:

²⁶ Տե՛ս, օրինակ, ՀՀ նախագահի 2012թ. օգոստոսի 23-ի ՆԿ-116-Ա կարգադրությունը Աշխատանքային խումբ ստեղծելու մասին, 2016թ. դեկտեմբերի 20-ի ՆԿ-262-Ա կարգադրությունը Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծելու մասին (2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ներքո ՀՀ նախագահին վերապահված լիազորությունների շրջանակում): Տե՛ս նաև ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 20-ի 1247-Ա և 2019թ. փետրվարի 21-ի 164-Ա որոշումները աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին (2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության հիման վրա օրենքով ՀՀ վարչապետին վերապահված լիազորությունների շրջանակում):

²⁷ Դիմումի ձևանմուշի մասով դա ունեցել է էական բացասական ազդեցություն գործընթացի թափանցիկության վրա: Տե՛ս սույն զեկույցի 4.7 կետը:

(Կարգադրության 2-րդ կետի 3-րդ ենթակետ), այսինքն առնվազն զրույցի օրվա և ժամի որոշումը: Այլ կերպ՝ Աշխատանքային խումբն ունեցել է ոչ միայն խորհրդատվական, այլև իրավաներգործող իրավասություն:

3.8 Վերոգրյալի հիման վրա համապատասխանաբար եզրակացնում ենք, որ ՀՀ նախագահի կարգադրությամբ կամ ՀՀ նախագահի որևէ այլ իրավական ակտով Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրումն ապահովելու կամ որևէ այլ հարցով աշխատանքային խմբի կամ որևէ այլ խորհրդակցական մարմնի ձևավորումն ինքնին իրավաչափ չէ՝ նման լիազորության բացակայության պատճառով:

3.9 Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման գործընթացն առավել թափանցիկ և արդարացի դարձնելու իրավաչափ նպատակը նվաճելու համար ընդունելի է բացառապես ոչ ֆորմալ խորհրդակցության գործիքը՝ առանց դրա իրավական ամրագրման: Այդ պարագայում գործընթացի կազմակերպման գործառույթը կարող է իրականացնել ոչ թե խորհրդակցական մարմինը (աշխատանքային խումբը), այլ ՀՀ Նախագահի աշխատակազմը, որը, ՀՀ Սահմանադրության 145-րդ հոդվածի հիման վրա, օժտված է ՀՀ նախագահի գործունեությունն ապահովելու գործառույթով:

4. Ընթացակարգի համապատասխանությունը իրավունքի սկզբունքներին

4.1 Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման ՀՀ նախագահի սահմանադրական բացարձակ հայեցողությունը սահմանափակող ընթացակարգի ներդրումը պայմանավորվել է առաջադրվող թեկնածուի արդար և թափանցիկ ընտրությունն ապահովելու անհրաժեշտությամբ (տե՛ս սույն զեկույցի 1.5 և 1.6 կետերը): Ուստի սույն զեկույցի շրջանակում քննարկման ենթակա երկրորդ հարցը հետևյալն է՝ արդյո՞ք ՀՀ նախագահի կարգադրությամբ սահմանված և անցկացված ընթացակարգը համապատասխանել է նշված սկզբունքներին:

(ա) Արդարություն

4.2 Արդարությունը ենթադրում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում թեկնածուի առաջադրման մասին որոշման կայացումը տեսանելի և ստուգելի կապի մեջ լինի սահմանված ընթացակարգի հետ:

4.3 Կարգադրությամբ նախատեսվել է Աշխատանքային խմբի անդամի կողմից յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ խորհրդատվական կարծիքների ներկայացման պահանջ: Այդուհանդերձ, որևէ կերպ չի կանոնակարգվել խորհրդատվական կարծիքի բովանդակությունը, մասնավորապես՝ հստակ չէ. արդյոք Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացրել է միայն իր նկարագրողական կարծի՞քը յուրաքանչյուր հավակնորդների որակների վերաբերյալ, թե՞ նաև արտահայտել է «նախընտրելի» թեկնածուի վերաբերյալ իր ընտրությունը: Եթե ՀՀ նախագահի 2018թ. հունիսի 18-ի ՆԿ-84-Ա կարգադրությունը (տե՛ս սույն զեկույցի 1.8 կետը) առնվազն պարունակում էր անանուն անհատական կարծիքների ամփոփման վերաբերյալ դրույթ, ապա 2019թ. հունվարի 31-ի ՆԿ-5-Ա կարգադրությունը սահմանում է միայն Նախագահին կարծիքների ներկայացման պահանջ: Արդյունքում պարզաբանված չէ այն հարցը, թե ինչ սկզբունքների հիման վրա է ՀՀ նախագահն ամփոփել կարծիքները, արդյոք ՀՀ նախագահի առաջադրած թեկնածուն հենց Աշխատանքային խմբի նախընտրելի թեկնածուն էր:

4.4 Այս վճռորոշ որոշման հիմնավորվածության ստուգման մեխանիզմի բացակայության պարագայում ՀՀ նախագահի ցանկացած հայեցողություն կարող է «լեգիտիմացվել» Աշխատանքային խմբի քողի ներքո՝ բովանդակազրկելով ՀՀ նախագահի սահմանադրական բացարձակ հայեցողությունը սահմանափակող ընթացակարգի ներդրումը:

(բ) Թափանցիկություն

4.5 Թափանցիկության սկզբունքը ենթադրում է, որ Աշխատանքային խմբի անդամների ընտրությունը, հավակնորդների վերաբերյալ տեղեկատվությունը, թեկնածուներին ներկայացվող գնահատողական պահանջների չափման կարգը, Աշխատանքային խմբի կողմից հավակնորդների հետ զրույցները, ինչպես նաև դրանց արդյունքների ամփոփումն ու հավակնորդների վերաբերյալ Աշխատանքային խմբի կարծիքները հանրության համար լինեն անհրաժեշտ և բավարար չափով հասանելի ու մատչելի: Ստորև անդրադարձ է կատարվում նշված հարցերից յուրաքանչյուրին առանձին:

4.6 *Աշխատանքային խմբի անդամների ընտրության թափանցիկությունը:* Պարզ չէ, թե ինչ սկզբունքով են ընտրվել Աշխատանքային խմբում ընդգրկված մարմիններն և կազմակերպությունները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացված անդամները: Ավելին, չի տրամադրվել տեղեկատվություն այն մասին, թե արդյոք կարգադրության հավելվածում նշված բոլոր մարմիններն ու կազմակերպություններն են հայտնել Աշխատանքային խմբում ներգրավվելու իրենց համաձայնությունը, և եթե՝ ոչ, ապա որոնք են եղել չմասնակցելու պատճառները: Այսպիսով, Աշխատանքային խմբի անդամների ընտրությունը թափանցիկ չի եղել:

4.7 *Հավակնորդների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:* Կարգադրությամբ սահմանված չեն հավակնորդների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովման անհրաժեշտ երաշխիքներ: Ավելին, Աշխատանքային խմբի հաստատած դիմումի ձևում այս կարևորագույն հանրային գործընթացում թեկնածության փաստի հրապարակումը թողնվել է հավակնորդների հայեցողությանը (տե՛ս սույն զեկույցի 1.14 կետը): Գործնականում նույնպես հավակնորդների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ապահովված չի եղել: Մասնավորապես, հանրությանը չեն ներկայացվել տեղեկություններ հավակնորդների ինքնության, կրթության, աշխատանքային ստաժի,

գործունեության, ինչպես նաև Սահմանադրությամբ ու Սահմանադրական դատարանի մասին օրենքով դատավորին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ (տե՛ս սույն զեկույցի 2.5 կետը): Թեև Սահմանադրական դատարանի դատավորի թափուր պաշտոնում առաջադրված հավակնորդները համաձայնություն տվել էին թեկնածության փաստը հրապարակելու վերաբերյալ, այդ տեղեկություններն (անգամ հավակնորդների թիվը) աշխատակազմի կամ Աշխատանքային խմբի կողմից չեն հրապարակվել: Հավակնորդների թվի և նրանց ինքնության վերաբերյալ տեղեկությունները հաստատվել են միայն մամուլի հրապարակումներից հետո՝ դիմումները ներկայացնելու վերջնաժամկետից շուրջ տասն օր անց, ընդ որում, ոչ թե ՀՀ նախագահի աշխատակազմի, այլ ԶԼՄ-ների նախաձեռնությամբ (տե՛ս սույն զեկույցի 1.16 կետը): Արդյունքում, հավակնորդների ճանաչելիության, բարձր մասնագիտական ու բարոյական որակների վերաբերյալ հանրային ընկալումները մնացել են չբացահայտված: Այսպիսով, հավակնորդների վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ չի եղել:

4.8 *Թեկնածուներին ներկայացվող գնահատողական պահանջների չափման կարգի թափանցիկությունը:* ՀՀ նախագահի պաշտոնական կայքում Աշխատանքային խումբը տարածել է միայն հայտարարություն Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրմանը մասնակցելու նպատակով հավակնորդների կողմից ներկայացվող փաստաթղթերի և դիմումների ներկայացման ժամկետի վերաբերյալ (տե՛ս սույն զեկույցի 1.13 կետը): Միաժամանակ, հայտարարությունը չի պարունակել տեղեկատվություն՝ թեկնածուի ընտրության, այդ թվում՝ թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման կարգի վերաբերյալ, ինչը ցանկացած բաց և մրցութային գործընթացի պարտադիր պայմանն է և գործընթացի նկատմամբ վստահություն ապահովող գործոն²⁸: Այսպիսով, թեկնածուներին ներկայացվող գնահատողական պահանջների չափման կարգը թափանցիկ չի եղել:

²⁸ Որպես Հայաստանի փորձից լավ օրինակ, հիշատակելի է «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2014թ. օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով սահմանված կարգը: Տե՛ս <https://www.president.am/files/legislation/1217.pdf>

4.9 *Աշխատանքային խմբի կողմից հավակնորդների հետ զրույցների թափանցիկությունը:* Հրապարակային եղանակով տեղեկություններ չեն հաղորդվել հավակնորդների հետ Աշխատանքային խմբի կողմից զրույցների անցկացման տեղի և ժամի մասին, ինչն ինքնին սահմանափակել է զրույցներին հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների մասնակցության հնարավորությունը: Երկու հասարակական կազմակերպություն հնարավորություն են ունեցել ներկա գտնվել երեք հավակնորդներից երկուսի հետ ՀՀ նախագահի աշխատակազմում մարտի 13-ին կազմակերպված անհատական զրույցին (տե՛ս սույն գեկույցի 1.17 կետը): Այնուհանդերձ, հավակնորդներից մեկի հետ մարտի 6-ին անցկացված անհատական զրույցին ներկա չի գտնվել որևէ հասարակական կազմակերպություն: Ժամի և վայրի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հնարավոր չի դարձրել նաև դրան մեր կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը: Իսկ մարտի 13-ին անցկացված անհատական զրույցին հնարավոր է եղել այն կազմակերպությունների մասնակցությունը, որոնք ունեցել են պրոակտիվ դեր²⁹: Այսպիսով, Աշխատանքային խմբի կողմից հավակնորդների հետ զրույցները բավարար չափով թափանցիկ չեն եղել:

4.10 *Անհատական զրույցների արդյունքների ամփոփման և Աշխատանքային խմբի կարծիքների թափանցիկությունը:* Հանրությունը չի ստացել որևէ տեղեկություն հավակնորդներից յուրաքանչյուրի վերաբերյալ Աշխատանքային խմբի մոտեցումների մասին: Անգամ պարզաբանված չէ այն հարցը, թե արդյոք մեկ կամ մի քանի անհատական զրույցի չմասնակցած Աշխատանքային խմբի անդամը ներկայացրել է խորհրդատվական կարծիք, թե՛ ոչ: Այսպիսով, անհատական զրույցների արդյունքների ամփոփումը և Աշխատանքային խմբի կարծիքները նույնպես անհրաժեշտ չափով թափանցիկ չեն եղել:

4.11 ***Վերոգրյալի հիման վրա համապարասխանաբար եզրակացնում ենք, որ ՀՀ նախագահի կարգադրությամբ սահմանված և անցկացված ընթացակարգը չի համապարասխանել արդարության և թափանցիկության սկզբունքներին:***

²⁹ Որպես Հայաստանի փորձից լավ օրինակ, հիշատակելի է ՀՀ նախագահի 2014թ. օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագիրը, որի հավելվածի 8-րդ կետով սահմանվում է մրցույթի հարցազրույցի փուլին զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության հնարավորություն և որպես ապահովող պայման նախատեսված է հարցազրույցի օրվա և ժամի վերաբերյալ տեղեկությունների հանրայնացում: Տե՛ս <https://www.president.am/files/legislation/1217.pdf>

5. Աշխատանքային խմբի կազմավորումը և դրա արդյունավետությունը

5.1 Սույն զեկույցի շրջանակում քննարկման ենթակա երրորդ հարցը հետևյալն է՝ Աշխատանքային խմբի կազմավորման հիմքում ընկած մոտեցումն արդյո՞ք համարժեք էր Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու ի հայտ բերելու խնդրին:

5.2 Նշված հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե որն է Աշխատանքային խմբի տվյալ կազմի որոշման հիմքում ընկած մոտեցումը (խմբի կազմը տե՛ս սույն զեկույցի 1.15 կետում): Համապատասխան հարց ուղղելով ՀՀ նախագահի աշխատակազմին՝ մեզ միայն պարզաբանվել է, որ Աշխատանքային խմբում ընդգրկված հաստատությունները որոշվել են ՀՀ նախագահի հայեցողությամբ: Ուստի այդ հայեցողության հիմքում ընկած օրինաչափությունը ստորև ի հայտ է բերվելու Կարգադրությամբ սահմանված կազմի ինստիտուցիոնալ և գործառության վերլուծության եղանակով:

5.3 Կարգադրության հավելվածիցից բխում է, որ Աշխատանքային խմբի կազմավորման հիմքում դրվել է ներկայացուցչականության սկզբունքը: Ընդ որում, ընտրված բանաձևը, մեր դիտարկմամբ, հանգում է հետևյալին. (1) ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչների ներգրավումը՝ ՀՀ նախագահի գործունեության ապահովման գործառույթն ունեցող մարմնի կողմից գործընթացի կազմակերպական կողմն ապահովելու նպատակով, (2) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ներկայացուցիչների ներգրավումը՝ գործընթացին պետական իշխանության բոլոր ճյուղերի մասնակցությունն ապահովելու նպատակով, (3) ուսումնական հաստատությունների և Փաստաբանների պալատի ներգրավումը՝ գործընթացին գիտական և գործնական իրավաբանության ներկայացուցիչների մասնակցությունը ապահովելու նպատակով, (4) Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ներգրավումը՝ պետության և քաղաքացիական հասարակության միջև յուրատեսակ կամուրջ հանդիսացող անկախ հաստատության մասնակցությունն ապահովելու նպատակով:

5.4 Դիտարկելով պետական իշխանության երեք ճյուղերի ներկայացուցիչների ներգրավման հարցը՝ հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրությանը հիման վրա՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններն արդեն իսկ ներգրավված են Սահմանադրական դատարանի կազմավորման սահմանադրաիրավական գործընթացում (տե՛ս սույն զեկույցի 2.4 և 2.7 կետերը), ընդ որում՝ օրենսդիր իշխանության մարմինը՝ ՀՀ նախագահի, դատական և գործադիր իշխանության մարմինների առաջադրած թեկնածությունների քննարկման և ընտրության գործառույթով: Այս պայմաններում պետական իշխանության երեք ճյուղերի ներկայացուցիչների և հատկապես օրենսդիր ներգրավումը ՀՀ նախագահի կողմից թեկնածուի առաջադրման գործընթացին խաթարում է Սահմանադրի ամրագրած հավասարակշիռ կառուցակարգը:

5.5 Դիտարկելով գործընթացին գիտական և գործնական իրավաբանության ներկայացուցիչների ներգրավման հարցը՝ հարկ է նկատել, որ ՀՀ նախագահի 2018թ. հունիսի 11-ի ՆԿ-84-Ա կարգադրության համեմատությամբ այստեղ տեղի է ունեցել երկու փոփոխություն. Աշխատանքային խմբի կազմում չեն ընդգրկվել Արդարադատության ակադեմիայի և «ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները: Այդ փոփոխությունը հանրության առջև չի պարզաբանվել, և հատկապես Արդարադատության ակադեմիայի մասով դժվար է դրան գտնել ողջամիտ բացատրություն³⁰:

5.6 Հարկ է ընդգծել, որ Աշխատանքային խմբում ընդգրկված կառույցները ներկայացված չեն եղել բարձրագույն մակարդակով («առաջին դեմքերով») և ինքնուրույնաբար են որոշել իրենց ներկայացուցիչներին՝ առանց ունենալու նրանց որոշման ուղենիշներ կամ չափորոշիչներ: Մասնավորապես պարզ չէ՝ կառույցների ներկայացուցիչներն ընտրվել են կառույցի շահը Աշխատանքային խմբում լավագույնս ներկայացնելու՞, թե՞ բարձր հեղինակության և սահմանված չափանիշներին հավակնորդների համապատասխանությունը լավագույնս դիտարկելու ունակության հիմքով:

³⁰ ՀՀ դատավորների միությունը, միավորելով ՀՀ բոլոր դատավորներին, լինելով հասարակական կազմակերպություն, այնուհանդերձ կարող էր դիտվել որպես դատական իշխանությանը de facto ներկայացնող երկրորդ կառույց՝ Բարձրագույն դատական խորհրդի հետ մեկտեղ, ուստի Ձեկույցի 5.4 կետում ներկայացված տրամաբանության ներքո կարող է ընկալվել լինել այդ մարմնի ներկայացուցչի դուրսբերումը Աշխատանքային խմբի կազմից:

5.7 Մինչդեռ Աշխատանքային խմբի և դրա անդամների հիմնական գործառույթն այն է, որ իրականացվի հավակնորդներին ներկայացվող պահանջների, հատկապես գնահատողական բնույթի պահանջների (բարձր մասնագիտական և բարոյական որակներ) դիտարկում և դրանց վերաբերյալ ՀՀ նախագահին ուղղված կարծիքի պատրաստում: Ուստի դժվար է պատկերացնել, որ Աշխատանքային խմբի անդամը չլինի սահմանադրաիրավական ոլորտի մասնագետ, բայց կարողանա պատշաճ գնահատել հավակնորդի բարձր մասնագիտական որակները, կամ մասնագիտական հանրությունում չունենա բարձր հեղինակություն, բայց կարողանա գնահատել հավակնորդի բարձր բարոյական որակները: Այլ կերպ՝ Աշխատանքային խմբի անդամները ևս պետք է օժտված լինեն բարձր մասնագիտական որակներով և բարձր հեղինակությամբ՝ իրենց հիմնական գործառույթը պատշաճ իրականացնելու համար: Սակայն այդպիսի խնդիր Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված կառույցների առջև Կարգադրությամբ կամ որևէ այլ ֆորմալ ձևով չի դրվել:

5.8 ***Վերոգրյալի հիման վրա համապատասխանաբար եզրակացնում ենք, որ Աշխատանքային խմբի կազմավորման հիմքում ընկած մոտեցումը համարժեք չէ Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու ի հայտ բերելու խնդրին:***

5.9 Կարծում ենք, որպես Աշխատանքային խմբի կազմավորման հիմքում ընկած ներկայացուցչականության սկզբունքի այլընտրանք՝ հարկ է դիտարկել սահմանադրական իրավունքի ոլորտում բարձր մասնագիտական որակներ և բարձր հեղինակություն ունեցող անձանց անհատապես ներգրավելու հնարավորությունը:

5.10 Այս առումով կարող է հետաքրքրական լինել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010թ. նոյեմբերի 10-ի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում թեկնածուների դիտարկման նպատակով փորձագետների խորհրդատվական խումբ ստեղծելու մասին CM/Res(2010)26 բանաձևը, որով սահմանվել են նաև փորձագետների խորհրդատվական խմբի կազմի ձևավորման սկզբունքները: Մասնավորապես, վերջինիս կազմում պետք է ընդգրկվեն ազգային բարձրագույն դատարանների անդամներ, միջազգային դատարանների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավորներ և այլ հեղինակավոր

իրավաբաններ³¹: Ինչպես տեսնում ենք, խմբի կազմում ընդգրկվում են մի կողմից բարձրագույն և միջազգային դատական մարմինների նախկին դատավորներ, իսկ մյուս կողմից հեղինակավոր իրավաբաններ՝ այսպիսով խորհրդատվական խմբի կազմում համատեղելով կիրառական և տեսական փորձը:

5.11 Վերոգրյալ փորձը հաշվի առնելով՝ Աշխատանքային խումբ կամ որևէ այլ ֆորմալ կամ ոչ ֆորմալ խորհրդատվական ձևաչափ կազմավորելիս Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու ի հայտ բերելու նպատակը կենսագործելու տեսանկյունից նախընտրելի է անհատական հեղինակության սկզբունքը, երբ աշխատանքային խմբի կազմում ընդգրկվում են անհատական կարգով ընտրված ՀՀ բարձրագույն դատական մարմինների՝ Սահմանադրական, Վճռաբեկ դատարանի պաշտոնաթող դատավորներ, ինչպես նաև սահմանադրաիրավական ոլորտի ականավոր գիտնականներ:

³¹ Coe.int, Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայք, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում թեկնածուների դիտարկման նպատակով փորձագետների խորհրդատվական խումբ ստեղծելու մասին Նախարարների կոմիտեի CM/Res(2010)26 բանաձև», հղում՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cdf79&fbclid=IwAR2wVioXqcSwsR76QzbBOfa1ejj2m6XR0W4LhMiz7Az81p7I3w1Za9Fbo4, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

6. Աշխատանքային խմբի գործիքակազմը և դրա արդյունավետությունը

6.1 Սույն զեկույցի շրջանակում քննարկման ենթակա չորրորդ հարցը հետևյալն է՝ Կարգադրությամբ Աշխատանքային խմբին վերապահված իրավական գործիքակազմն արդյոք համարժեք է եղել Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու արդյունավետ ձևով ի հայտ բերելու խնդրին:

Ստորև հարցը կդիտարկենք ըստ իրականացված գործընթացի փուլերի:

(ա) Դիմումների ներկայացման փուլ

6.2 Դիմումների ներկայացման փուլի կապակցությամբ Կարգադրությունը միայն պարունակում է հավակնորդների կողմից փաստաթղթերի ներկայացման, դրանք Աշխատանքային խմբի անդամներին փոխանցելու և այնուհետև հարցազրույցի փուլ կազմակերպելու մասին դրույթներ: Իսկ Սահմանադրությամբ և օրենքով ներկայացվող ֆորմալ պահանջներին³² չհամապատասխանող հավակնորդներին ֆիլտրելու և անհատական զրույցի փուլ չթույլատրելու մասին որևէ կարգավորում չի սահմանվել: Ստացվում է, որ ցանկացած անձ կարող էր դիմում ներկայացնել ՀՀ նախագահին, և նրա թեկնածությունը Աշխատանքային խմբի կողմից պետք է դիտարկվեր անհատական զրույցի փուլում: Այդպիսի կարգավորումն արդյունավետ համարվել չի կարող:

6.3 Դիմումների ներկայացման փուլում խնդրահարույց է նաև այն, որ ֆորմալ պահանջներին վերաբերող փաստաթղթերի լրիվությունը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին դրանց համապատասխանությունը, դրանցում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը ստուգելու իրավական որևէ գործիք Կարգադրությունը չի նախատեսում: Էլ ավելի խնդրահարույց է այն, որ Կարգադրությամբ սահմանված չէ գնահատողական պահանջների արդյունավետ ստուգման նպատակով հավելյալ տեղեկություններ հավաքելու՝

³² Սահմանադրական դատարանի մասին ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի հիման վրա՝ քառասուն տարին լրացած լինելը, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ընտրական իրավունք ունենալը, հայերենին տիրապետելը, բարձրագույն կրթությամբ իրավաբան լինելը, մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն ունենալը, ՀՀ ԱԺ կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա (մինչև 2019թ. ապրիլի 1-ն ուժի մեջ եղած խմբագրությամբ)՝ նոր թեկնածու լինելը:

Աշխատանքային խմբի իրավական որևէ գործիք (օրինակ՝ հավակնորդների հետ գործնական առնչություններ ունեցած անձանցից կամ լայն հանրությունից տեղեկատվության հայցումը):

6.4 Այդպիսի կարգավորումն էապես նվազեցրել է դիմումների ներկայացման փուլում Աշխատանքային խմբի գործառնականությունը, ուստի այդ գործընթացն արդյունավետ համարվել չի կարող³³:

(բ) Անհատական զրույցի փուլ

6.5 Կարգադրությամբ անհատական զրույցի գործառնական նպատակը սահմանված չէ: Այնուհանդերձ, ողջամիտ է ենթադրել, որ դրա նպատակը պետք է լինի Սահմանադրական դատարանի դատավորին ներկայացվող գնատողական պահանջների՝ բարձր մասնագիտական և բարոյական որակների պարզաբանումն է:

6.6 Ինչպես վերը ներկայացված է (տե՛ս սույն զեկույցի 6.2-6.4 կետերը), դիմումների ներկայացման փուլում Աշխատանքային խումբը չի ունեցել համապատասխան տեղեկատվություն հավաքելու անհրաժեշտ գործիքներ, ուստի անհատական զրույցի փուլի արդյունավետությունն ինքնին հարցականի տակ է:

6.7 Դիտարկելով հավակնորդներից երկուսի հետ անցկացված անհատական զրույցը և ուսումնասիրելով երրորդ հավակնորդի հետ զրույցի ձայնագրությունը՝ կարող ենք արձանագրել, որ հարցադրումների մեծ մասը եղել են նույնական բոլոր հավակնորդների համար, դրանք չեն ունեցել անհատականացված բնույթ, իսկ որոշ հարցերի դեպքում

³³ Որպես Հայաստանի փորձից լավ օրինակ, հիշատակելի է ՀՀ նախագահի 2014թ. օգոստոսի 2-ի ՆՀ-199 –Ն հրամանագիրը: Հրամանագրի հավելվածի 18-20-րդ կետերով սահմանվում է հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի լրիվությունը և դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին ստուգելու և թերությունները հավակնորդների կողմից վերացնելու ընթացակարգը: Իսկ 23-րդ կետով սահմանվում է արդեն հանձնաժողովի կողմից փաստաթղթերի լրիվության, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին դրանց համապատասխանության, ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիության ստուգումը: Միևնույն կետով նշվում է նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկություններ հավաքագրելու գործիքակազմը: Ընդ որում, հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակը կազմվում է նշված միջոցառումների արդյունքում՝ բացառելով օրենքով ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հավակնորդների՝ հաջորդ փուլ անցնելու հնարավորությունը: Տե՛ս <https://www.president.am/files/legislation/1217.pdf>

անհասկանալի էր, թե դրանք հավակնորդների ո՛ր որակները վերհանելուն են ուղղված եղել³⁴:

6.8 Կարևոր է նաև այն, որ գոյություն չի ունեցել հավակնորդներին գնահատելու քանակական չափելի համակարգ: Ուստի Աշխատանքային խմբի անդամների հարցերն օբյեկտիվորեն ունեցել են համակարգվածության ցածր մակարդակ:

6.9 Կարգավորման և պրակտիկայի նման վիճակն էապես նվազեցրել է անհատական զրույցի փուլում Աշխատանքային խմբի գործառնականությունը, ուստի այդ գործընթացն արդյունավետ համարվել չի կարող³⁵:

(գ) Խորհրդատվական կարծիքների ներկայացման և ամփոփման փուլ

6.10 Այս փուլի կապակցությամբ Կարգադրությամբ առկա միակ կարգավորումը աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի՝ յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ ՀՀ նախագահին խորհրդատվական կարծիքների ներկայացման պահանջն է: Այսպիսով, ապահովված չէ ո՛չ այս փուլի թափանցիկությունը, ո՛չ էլ արդարացիությունը՝ ՀՀ նախագահի կողմից կայացված որոշման և Աշխատանքային խմբի ներկայացրած կարծիքների միջև պատճառական կապի առումով³⁶, ուստի այս գործընթացի արդյունավետության քննարկումն առարկայազուրկ է:

³⁴ Օրինակ՝ «ինչ կանեիք, եթե ունենայիք կախարդական փայտիկ»:

³⁵ Որպես Հայաստանի փորձից լավ օրինակ, հիշատակելի է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2014թ սեպտեմբերի 1-ի 3-Լ որոշումը: Դրանով սահմանվում է ՄԻԵԴ դատավորի պաշտոնում առաջադրվող թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների դրա բաշխումը, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը, ինչպես նաև գնահատման և միավորների հաշվարկման կարգը՝ այդպիսով չափելի դարձնելով հարցադրումների արդյունքում հանձնաժողովի անդամների գնահատականները հավակնորդների անձնական և մասնագիտական որակների վերաբերյալ: Տես http://moj.am/storage/uploads/Voroshum_3.doc

³⁶ Հետաքրքրական է Մեծ Բրիտանիայում կիրառելի իրավական կարգավորումը, համաձայն որի՝ համարժեք հանձնաժողովի կողմից Գերագույն դատարանի դատավորի թեկնածուների վերաբերյալ կարծիքների ներկայացումից հետո Լորդ-կանցլերն իրավասու է կատարել հետևյալ գործողություններից մեկը. 1. հաստատել հանձնաժողովի ընտրությունը, 2. հանձնաժողովին առաջարկել վերանայել ընտրությունը, իսկ հրաժարվելու դեպքում՝ մերժել ընտրությունը: Նման իրավակարգավորման դեպքում Լորդ-կանցլերի հայեցողությունն ըստ էության պահպանվում է, բայց միաժամանակ նաև ապահովվում է հանձնաժողովի և հանրության առջև հաշվետվողականությունը: Տե՛ս Constitutional Reform Act 2005, Part 3, section 29,

http://www.legislation.gov.uk/ukpga/2005/4/pdfs/ukpga_20050004_en.pdf

6.11 ***Վերոգրյալի հիման վրա համապատասխանաբար եզրակացնում ենք, որ Կարգադրությամբ Աշխատանքային խմբին վերապահված իրավական գործիքակազմը համարժեք չի եղել Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու արդյունավետ ձևով ի հայտ բերելու խնդրին:***

6.12 Կարծում ենք, որպես այդպիսի գործիքակազմ կարող է ծառայել ֆորմալ պահանջներին չհամապատասխանող թեկնածուներին դիմումների ընդունման փուլում ֆիլտրելու, հավակնորդների ներկայացրած տեղեկությունները ստուգելու, նոր վերաբերելի տեղեկություններ հայցելու գործիքները՝ դիմումների ներկայացման փուլում, գնահատողական պահանջների չափելիության սահմանումը կամ առնվազն ուղենիշների հրապարակումը՝ անհատական զրույցի փուլում, ՀՀ նախագահի կողմից գործընթացի արդյունքում կայացվող որոշման և Աշխատանքային խմբի ներկայացրած կարծիքների միջև որոշակի տեսանելի կապի հաստատումը:

7. Քաղաքական ազդեցությունները Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու գործընթացում

7.1 Սույն զեկույցի շրջանակում քննարկման ենթակա հինգերորդ հարցը հետևյալն է՝ արդյոք Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության գործընթացում առկա են քաղաքական ազդեցություններ, և եթե՝ այո, ապա ինչպիսի:

7.2 Քաղաքական ազդեցությունների մակարդակի վրա ազդող գործոն է *Սահմանադրական դատարանի դատավոր նշանակելու/ընտրելու ընթացակարգը*: Այս առումով, Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) առանձնացնում է Սահմանադրական դատարանի դատավորի նշանակման երեք համակարգ՝ (1) ուղղակի նշանակման համակարգը, որը չի ներառում որևէ քվեարկություն, (2) ընտրության միջոցով ձևավորման համակարգը, որն ապահովում է առավել մեծ լեգիտիմության, քանի որ ընտրող մարմինը խորհրդարանն է. ընդ որում, Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրումներ կարող են կատարել նախագահը, խորհրդարանի անդամները, գործադիր կամ բարձրագույն դատական մարմինները կամ քաղաքական կուսակցությունները, (3) ընտրության և ուղղակի նշանակման հիբրիդ, որն առավել տարածված մոդելն է³⁷:

7.3 Մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում գործում էր հիբրիդային տարբերակը, և և 83-րդ հոդվածի 1-ին կետ Սահմանադրական դատարանի ինը դատավորներից չորսին նշանակում էր ՀՀ նախագահը (2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 55-րդ հոդվածի 10-րդ կետի հիման վրա), իսկ հինգին՝ Ազգային ժողովը (Սահմանադրության 83-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա): 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո անցում է կատարել ընտրության միջոցով ձևավորման համակարգին. Սահմանադրական դատարանի դատավորներին

³⁷ Venice.coe.int, ԵԽ Վենետիկի հանձնաժողովի պաշտոնական կայք, «Սահմանադրական դատարանների կառուցվածքը», European commission for democracy through law (Venice commission), The composition of Constitutional courts, December 1997, pages 4-6, [https://www.venice.coe.int/webforms/documents/CDL-STD\(1997\)020.aspx](https://www.venice.coe.int/webforms/documents/CDL-STD(1997)020.aspx), (վերջին մուտքը՝ 15 ապրիլ, 2019թ.)

ընտրում է Ազգային ժողովը՝ Հանրապետության նախագահի, Կառավարության և Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկություններով (տե՛ս սույն զեկույցի 2.4 կետը):

7.4 Այս համակարգը միտված է ապահովելու առավել մեծ լեգիտիմություն, սակայն քննադատները մատնանշում են Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու գործընթացի քաղաքականացվածությունը՝ պնդելով, որ ընտրությունը հաճախ պայմանավորված է կուսակցական որոշումներով: Քաղաքական բացասական ազդեցությունների զսպման մեխանիզմ է դիտարկվում Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության բարձր շեմը՝ որպես քաղաքական մեծամասնության և փոքրամասնության համաձայնության, իշխող քաղաքական ուժի միանձնյա որոշման բացառման գրավական:

7.5 Այս առումով թեև ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդի շեմ (80 պատգամավոր), ներկա 7-րդ գումարման Ազգային ժողովի 132 պատգամավորներից 88-ը ներկայացնում են «Իմ քայլը» խմբակցությանը: Դա ենթադրում է առանց պառլամենտական փոքրամասնության հետ համաձայնության իշխող քաղաքական ուժի որոշման մենաշնորհ:

7.6 Քաղաքական ազդեցությունների մակարդակի վրա ազդող հաջորդ գործոնը իշխող քաղաքական ուժի կողմից կոնկրետ թեկնածուի սատարումն է:

7.7 Այս առնչությամբ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության գործընթացում Ազգային ժողովի պատգամավորները թեկնածուին դիտարկում են Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների լույսի ներքո՝ գնահատելով նրա արժանիքներն ու հեղինակությունը, թե՞ առաջնորդվում են անձերի վերաբերյալ քաղաքական նախապատվություններով:

7.8 Այս համատեքստում կարևոր են առաջադրված Գոռ Հովհաննիսյանի թեկնածության շուրջ քննարկումներում իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների մեկնաբանությունները՝ ի պաշտպանություն ներկայում Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու չհանդիսացող այլ անձի՝ Վահե Գրիգորյանի: Մասնավորապես, «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Հայկ Գևորգյանը նշել է, որ իր թեկնածուն Վահե

Գրիգորյանն է³⁸: Նույն խմբակցության մեկ այլ պատգամավոր Վահագն Հովակիմյանը հայտարարել է, որ Հանրապետության նախագահը լավագույնին չի ընտրել³⁹: Իսկ պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյանը նշել է, որ 2018թ. հոկտեմբերի 23-ին Վահե Գրիգորյանը չէր ընտրվել Սահմանադրական դատարանի դատավոր ընդամենը քվորում չլինելու պատճառով, ուստի որոշակի անարդարության զգացում կա, որ Հանրապետության նախագահը կրկին չի առաջադրում Վահե Գրիգորյանի թեկնածությունը⁴⁰: Նշված արտահայտությունները քաղաքական քրոնիզմի (cronyism) վկայություններ են: Դրանք նաև բացահայտում են, որ իշխող քաղաքական ուժն առանձնապես չի կարևորում առաջարկող և ընտրող մարմինների իրավասությունների տարանջատման սահմանադրական կարգավորումը:

7.9 Քաղաքական ազդեցությունների մակարդակի վրա ազդող հաջորդ գործոնը նախաընտրելի թեկնածուի ընտրության նպատակով օրենսդրական փոփոխության ճանապարհով արգելքներ վերացնելու փորձն է: Այս կապակցությամբ Կառավարության կողմից նախաձեռնվել է օրենսդրական փոփոխություն, որը վերաբերում է թեկնածուի առաջադրմանն առնչվող իրավական արգելքին⁴¹:

³⁸ Armdaily.am, լրատվական կայք, «Իմ թեկնածուն Վահե Գրիգորյանն է. Հայկ Գևորգյանը՝ Գոռ Հովհաննիսյանի թեկնածության մասին», 23 մարտի 2019թ., հղում՝ <https://www.armdaily.am/news/18213.html?lang=hy>, (վերջին մուտքը՝ 2019թ. ապրիլի 15)

³⁹ Factor.am, լրատվական կայք, ««Լավագույնին չի ընտրել»․ «Իմ քայլ»-ում հիացած չեն ՍԴ դատավորի թեկնածուի՝ նախագահի ընտրությունից», 26 մարտի 2019թ., հղում՝ <https://factor.am/136085.html>, (վերջին մուտքը՝ 15 ապրիլ, 2019թ.)

⁴⁰ Lragir.am, լրատվական կայք, «ԱԺ պատգամավորը՝ ՍԴ անդամի թեկնածուի մասին», 26 մարտի 2019., հղում՝ <https://www.lragir.am/2019/03/26/428906/>, (վերջին մուտքը՝ 15 ապրիլ, 2019թ.)

⁴¹ Իրավական արգելքի մասին մեկնաբանություն է ներկայացրել Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի հավակնորդներից Վահե Գրիգորյանը, որը, իրավական արգելքը ինքնին չհերքելով, նշել է միայն, որ նշված դրույթն ամբողջությամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և ուժը կորցնելու է ապրիլի 1-ից: Այլ մոտեցում է ներկայացրել ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավոր Տարոն Սիմոնյանը՝ նշելով, որ իրավական արգելք սահմանվում է իրավասու մարմնի նկատմամբ, այսինքն՝ իրավասու մարմինը չի կարող միևնույն թեկնածուին առաջադրել, անկախ նրանից, թե որ գումարման Ազգային ժողով է ներկայացնելու թեկնածուին: Նույն տեսակետի վերաբերյալ մեկնաբանություն է ներկայացրել նաև Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու Գոռ Հովհաննիսյանը, համաձայն որի՝ խորհրդարանը մշտապես գործող մարմին է, և նրա որոշումների գործողությունն ամենևին կախված չէ այդ կոնկրետ որոշումն ընդունող խորհրդարանի լիազորությունների ժամկետից: Խորհրդարանի որոշումները մնում են ուժի մեջ և գործում են նաև այն ժամանակ, երբ դրանք ընդունած խորհրդարանը նույն կազմով այլևս գոյություն չունի: Տե՛ս Youtube.com, «Նոր բառով մենք վերջ դրեցինք, որ անընդմեջ նույն թեկնածուին կարելի է ներկայացնել. Տարոն Սիմոնյան», 28 մարտի 2019թ., հղում՝

7.10 Թեև իրավական արգելքի բացակայության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել Արդարադատության նախարար Արտակ Ջեյնալյանը⁴² այնուամենայնիվ, Կառավարությունն առաջարկել է, որ «իրավասու մարմինը առաջադրում է նոր թեկնածու» ձևակերպման փոխարեն տրվի «իրավասու մարմինը կրկին առաջադրում է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու» ձևակերպումը: Այս օրենսդրական փոփոխությունը Կառավարության կողմից նախաձեռնվել էր «ի կատարումն» Սահմանադրական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1434 որոշման, թեև այս որոշմամբ վերոնշյալ ձևակերպումը չէր համարվել Սահմանադրությանը հակասող⁴³: Կառավարության օրենսդրական նախաձեռնության հիմնավորումներում ևս չկար որևէ պարզաբանում ՀՀ նախագահի կողմից թեկնածուի առաջադրման փուլում ձևակերպման փոփոխության օբյեկտիվ անհրաժեշտության վերաբերյալ:

7.11 Գործադիր իշխանության բացահայտ «շահագրգռվածությունը» նախընտրելի թեկնածուի ընտրության հարցում չի ապահովվում վստահելիություն և չի խթանում իրավաբանական համայնքի ակնառու ներկայացուցիչների ակտիվ մասնակցություն՝ դառնալով գործընթացի նկատմամբ անվստահություն ծնող կարևորագույն գործոններից մեկը: Գործընթացի նկատմամբ հանրային վստահության ցուցիչներից է մասնակցության աստիճանը: Այս առումով, ինքնաառաջադրման եղանակի պարագայում հավակնորդների մասնակցության աստիճանը եղել է չափազանց ցածր (երեք հավակնորդ)՝ դրսևորելով նվազման միտումներ (տե՛ս սույն զեկույցի 1.11 և 1.17 կետերը):

https://www.youtube.com/watch?v=nQoKYTCyMG0&feature=youtu.be&fbclid=IwAR2DPOPztfJK6JenANSMMUE0I4FZIsK9zjA6fr1FNmjRurBpZx_MZ0POJ3U, Armdaily.am, լրատվական կայք, «Նախագահի կողմից կրկին Վահե Գրիգորյանին առաջադրելը հակասահմանադրական է», 23 փետրվարի 2019թ., հղում՝ <https://www.armdaily.am/news/15731.html?lang=hy>, (վերջին մուտքերը՝ 2019թ. ապրիլի 15-ին)

⁴² Արդարադատության նախարարը մասնավորապես նշել է. «Չկա սահմանադրական արգելք, որ նույն անձին նույն սուբյեկտը կամ այլ սուբյեկտ չի կարող ներկայացնել նույն ԱԺ-ին կամ այլ ԱԺ-ին: Նույն սուբյեկտը կարող է ներկայացնել նույն անձին տարբեր գումարումների ԱԺ-ներ, սահմանադրական արգելքը բացակայում է»: 1in.am, լրատվական կայք, «ՍԴ դատավորի թեկնածու կարող է ներկայացվել նույն անձը տարբեր գումարումների ԱԺ-ներ. Նախարարը՝ Տարոն Սիմոնյանին», 28 մարտի 2019թ., հղում՝ <https://www.1in.am/2531751.html>, (վերջին մուտքը՝ 15 ապրիլ, 2019թ.): Հատկանշական է, որ շեշտադրում է արվել սահմանադրական արգելքի բացակայությանը, սակայն օրենսդրական այլ արգելքների շրջանցման անթույլատրելիության հարցի անդրադարձ չկա:

⁴³ 2018թ. նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1434 որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչվել միայն Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տասնօրյա ժամկետի մասը, իսկ նորմը մնացած մասով համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

7.12 Վերոգրյալի հիման վրա համապատասխանաբար եզրակացնում ենք, որ Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու գործընթացի քաղաքականացվածություն ենթադրող ինստիտուցիոնալ մոդելի պայմաններում, թեկնածուի ընտրության 3/5-ի շեմը հաղթահարած դոմինանտ քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից՝ չառաջադրված թեկնածուի նախընտրելի լինելու վերաբերյալ բացահայտ դիրքորշումները, համակցված իրավական արգելքը վերացնելուն միտված օրենսդրական նախաձեռնությամբ, վկայում են գործընթացի նկատմամբ քաղաքական ազդեցությունների բարձր մակարդակի մասին:

8. Ամփոփիչ եզրակացություններ

1 ՀՀ նախագահի կարգադրությամբ կամ ՀՀ նախագահի որևէ այլ իրավական ակտով Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրումն ապահովելու կամ որևէ այլ հարցով աշխատանքային խմբի կամ որևէ այլ խորհրդակցական մարմնի ձևավորումն ինքնին իրավաչափ չէ՝ նման լիազորության բացակայության պատճառով:

2 Հանրապետության նախագահի 2019թ. հունվարի 31-ի ՆԿ-5-Ա կարգադրությամբ սահմանված և անցկացված ընթացակարգը չի համապատասխանել արդարության և թափանցիկության սկզբունքներին:

3 Հանրապետության նախագահի 2019թ. հունվարի 31-ի ՆԿ-5-Ա կարգադրությամբ խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբի կազմավորման հիմքում ընկած մոտեցումը համարժեք չէ Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածուի հայտ բերելու խնդրին:

4 Հանրապետության նախագահի 2019թ. հունվարի 31-ի ՆԿ-5-Ա կարգադրությամբ խորհրդակցական ժամանակավոր աշխատանքային խմբին վերապահված իրավական գործիքակազմը համարժեք չի եղել Սահմանադրական դատարանի դատավորի առավել արժանավոր թեկնածու արդյունավետ ձևով ի հայտ բերելու խնդրին:

5 Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու գործընթացի քաղաքականացվածությունն ենթադրող ինստիտուցիոնալ մոդելի պայմաններում, թեկնածուի ընտրության 3/5-ի շեմը հաղթահարած դոմինանտ քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից՝ չառաջադրված թեկնածուի նախընտրելի լինելու վերաբերյալ բացահայտ դիրքորշումները, համակցված իրավական արգելքը վերացնելուն միտված օրենսդրական նախաձեռնությամբ, վկայում են գործընթացի նկատմամբ քաղաքական ազդեցությունների բարձր մակարդակի մասին: